

**«Կենցաղային լվացքի մեքենաներին ներկայացվող էկոնախագծման
պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի
2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 թվականի
նոյեմբերի 10-ի թիվ 1015/2012 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով էներգասպառող արտադրատեսակներին ներկայացվող էկոնախագծման պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո,
քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն՝ էկոնախագծման պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող այն արտադրանքի համար, որն ունի իրացման եւ ապրանքաշրջանառության էական ծավալներ, նշանակալից ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա եւ մեծ ներուժ ունի շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու առումով՝ չպահանջելով չափազանց մեծ ծախսեր.

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված է, որ Հանձնաժողովը 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափանիշների համաձայն եւ Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո պետք է անհրաժեշտության դեպքում կիրարկման միջոց ընդունի կենցաղային սարքերի, այդ թվում՝ կենցաղային լվացքի մեքենաների մասով.
- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախնական ուսումնասիրություն, որով վերլուծվել են սովորաբար կենցաղում օգտագործվող կենցաղային լվացքի մեքենաների տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ներգործության եւ տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունը կատարվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների եւ շահագրգիռ կողմերի հետ համատեղ, եւ արդյունքները մատչելի են դարձվել հանրությանը.
- 4) սույն կանոնակարգը տարածվում է կենցաղում սպիտակեղենի լվացման համար նախատեսված արտադրատեսակների համար.
- 5) համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաներն ունեն առանձնահատուկ բնութագրեր եւ հետեւաբար բացառվում են սույն կանոնակարգի կիրառության ոլորտից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դրանք ունեն նույն ֆունկցիոնալ հնարավորությունները, ինչը եւ կենցաղային լվացքի մեքենաները, ապա դրանք հնարավորինս կարճ ժամկետներում պետք է ընդգրկվեն 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող այլ միջոցում.
- 6) սույն կանոնակարգի նպատակներով կարելի է համարվող կենցաղային լվացքի մեքենաների՝ շրջակա միջավայրի վրա ներգործությանն առնչվող հայեցակետը վերաբերում է ակտիվ շահագործման փուլում էներգիայի եւ ջրի սպառմանը: Միությունում սույն կանոնակարգով

կարգավորվող արտադրատեսակների էլեկտրաէներգիայի եւ ջրի տարեկան սպառումը 2005 թվականին գնահատվել է, համապատասխանաբար, 35 ՏՎտ/ժ եւ 2 213 մլն մ³: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, ապա 2020 թվականին էլեկտրաէներգիայի եւ ջրի տարեկան սպառումը, ըստ կանխատեսումների, կկազմի 37,7 ՏՎտ/ժ եւ 2 051 մլն մ³: Նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների կողմից էլեկտրաէներգիայի եւ ջրի սպառումը կարող է էապես կրճատվել.

- 7) նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված էկոնախագծման մյուս պարամետրերի հետ կապված պահանջներ սահմանելու անհրաժեշտություն չկա, քանի որ ակտիվ շահագործման փուլում կենցաղային լվացքի մեքենաների կողմից եւ ջրի սպառումը, անկասկած, բնապահպանական տեսանկյունից ամենակարեւորն է.
- 8) սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների կողմից էլեկտրաէներգիայի եւ ջրի սպառումը պետք է դարձվի առավել արդյունավետ՝ կիրառելով գործող չարտոնագրված ծախսարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք կարող են նվազեցնել տվյալ արտադրանքի գնման եւ շահագործման ընդհանուր ծախսերը.
- 9) էկոնախագծման պահանջները վերջնական սպառողի տեսանկյունից չպետք է ազդեն արտադրանքի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա, ինչպես նաեւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, ակտիվ շահագործման փուլում էլեկտրաէներգիայի եւ ջրի սպառումը նվազեցնելու օգուտները պետք է էապես գերազանցեն արտադրության փուլում տեղ գտած լրացուցիչ էկոլոգիական վնասները.

- 10) Էկոնախագծման պահանջները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակները վերանախագծելու համար արտադրողներին բավարար ժամանակ տրամադրելու նպատակով: Ժամկետը պետք է սահմանվի այնպես, որ հնարավոր լինի խուսափել շուկայում առկա սարքավորման ֆունկցիոնալ հնարավորությունների վրա բացասական ազդեցությունից, եւ սույն կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումն ապահովելիս հաշվի առնվեն վերջնական սպառողների եւ արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների համար ծախսերի ունեցած ազդեցությունները.
- 11) արտադրանքի համապատասխան պարամետրերի չափումը պետք է իրականացվի հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այնպիսի չափման մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների, իսկ առկայության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, ինչպես դրանք թվարկված են Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի, ինչպես նաեւ Տեղեկատվական հասարակության ծառայությունների մասին կանոնների ոլորտներում տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում².
- 12) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կանոնակարգով պետք է սահմանվեն համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգեր.
- 13) համապատասխանության ստուգումները դյուրացնելու համար արտադրողները տեխնիկական փաստաթղթերում պետք է տրամադրեն 2009/125/ԵՀ հրահանգի V եւ VI հավելվածներով նախատեսված

² ՊՏ L 204, 21.07.1998թ, էջ. 37:

տեղեկություններն այնքանով, որքանով նշված տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.

- 14) ի հավելումն սույն կանոնակարգով սահմանված պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պահանջների՝ պետք է կողմնորոշիչ հենանիշեր սահմանվեն գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար՝ սույն կանոնակարգով կարգավորվող արտադրատեսակների շահագործման ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների մասով տեղեկությունների լայն հասանելիությունը եւ մատչելիությունն ապահովելու համար.
- 15) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային լվացքի մեքենաների, էլեկտրական ցանցից սնուցվող եւ մարտկոցներով աշխատելու հնարավորություն ունեցող, այդ թվում՝ ոչ կենցաղային նպատակներով օգտագործման համար վաճառվող եւ ներկառուցված կենցաղային լվացքի մեքենաների շուկայահանման համար ներկայացվող էկոնախագծման պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաների նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «կենցաղային լվացքի մեքենա» նշանակում է ավտոմատ լվացքի մեքենա, որը ջուր օգտագործելով լվանում եւ ողողում է գործվածքը, ինչպես նաեւ ունի ցենտրիֆուգային եղանակով քամելու գործառույթ եւ նախատեսված է մասնավորապես ոչ մասնագիտական նպատակներով օգտագործման համար.

- 2) «ներկառուցված կենցաղային լվացքի մեքենա» նշանակում է կենցաղային լվացքի մեքենա, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ կամ նմանատիպ վայրում բացված այնպիսի խորշում տեղադրման համար, որը պետք է վերջնամշակվի կահույքի միջոցով.
- 3) «ավտոմատ լվացքի մեքենա» նշանակում է լվացքի մեքենա, որտեղ բեռնվածքի հետ կատարվող բոլոր գործողությունները կատարվում են մեքենայի կողմից՝ ծրագրի ընթացքում ցանկացած պահի առանց օգտագործողի միջամտության անհրաժեշտության.
- 4) «համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենա» նշանակում է կենցաղային լվացքի մեքենա, որն ունի թե՛ ցենտրիֆուգային եղանակով քամելու, թե՛ գործվածքները չորացնելու հնարավորություն՝ սովորաբար տաքացման կամ պտտման միջոցով.
- 5) «ծրագիր» նշանակում է նախապես սահմանված այնպիսի գործողությունների շարք, որոնք արտադրողի կողմից ընդունելի են համարվում գործվածքի կոնկրետ տեսակներ չորացնելու համար.
- 6) «ցիկլ» նշանակում է լվացման, ողողման եւ քամելու այն ամբողջական գործընթացը, որը սահմանվել է ընտրված ծրագրի համար.
- 7) «ծրագրի ժամանակ» նշանակում է ծրագրի սկզբից մինչեւ ծրագրի ավարտն ընկած ժամանակահատվածը՝ բացառությամբ վերջնական սպառողի կողմից ծրագրված ցանկացած հետաձգման.
- 8) «նոմինալ տարողունակություն» նշանակում է արտադրողի կողմից նշված առավելագույն զանգվածը՝ կիլոգրամով, որը մատակարարի կողմից նշվում է 0.5 կիլոգրամով աճման կարգով՝ կոնկրետ տեսակի չոր գործվածքի համար, որն ընտրված ծրագրով կարող է լվացվել կենցաղային լվացքի մեքենայում, եթե այն բեռնվում է արտադրողի հրահանգների համաձայն.
- 9) «մասնակի բեռնվածք» նշանակում է տվյալ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի նոմինալ տարողունակության կեսը.

- 10) «մնացորդային խոնավության պարունակություն» նշանակում է քամելու փուլի ավարտին բեռնվածքում առկա խոնավության քանակությունը.
- 11) «անջատված ռեժիմ» նշանակում է մի վիճակ, որին կենցաղային լվացքի մեքենան անցնում է սարքի կառավարման այնպիսի միջոցներով կամ գործարկիչներով, որոնք նվազագույն էներգասպառում ապահովելու նպատակով հասանելի են եւ նախատեսված են սովորական օգտագործման ժամանակ վերջնական սպառողի կողմից գործարկվելու համար, ինչը կարող է շարունակվել անորոշ ժամանակ, երբ կենցաղային լվացքի մեքենան միացված է հոսանքի աղբյուրին եւ օգտագործվում է արտադրողի հրահանգների համաձայն. եթե վերջնական սպառողի համար հասանելի չեն կառավարման միջոցներ կամ գործարկիչներ, ապա «անջատված ռեժիմ» նշանակում է այնպիսի վիճակ, որը տեղի է ունենում այն բանից հետո, երբ կենցաղային լվացքի մեքենան ինքնուրույն անցնում է էներգիայի սպառման հաստատուն ռեժիմին.
- 12) «միացված ռեժիմ» նշանակում է նվազագույն էներգասպառման ռեժիմ, որը ծրագիրն ավարտվելուց հետո կարող է շարունակվել անորոշ ժամանակ, եւ որի համար վերջնական սպառողից, բացի լվացքի մեքենան դատարկելուց, որեւէ լրացուցիչ միջամտություն չի պահանջվում.
- 13) «համարժեք լվացքի մեքենա» նշանակում է միեւնույն արտադրողի կողմից այլ առետորային կողով շուկայահանված կենցաղային լվացքի մեքենայի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է նույն նոմինալ տարողունակությամբ, տեխնիկական եւ շահագործման բնութագրերով, էներգիայի եւ ջրի սպառմամբ, ինչպես նաեւ լվացման եւ քամելու ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակով:

Հոդված 3

Էկոնախագծման պահանջները

Կենցաղային լվացքի մեքենաներին ներկայացվող ընդհանուր էկոնախագծման պահանջները սահմանված են I հավելվածի 1-ին կետով:

Կենցաղային լվացքի մեքենաներին ներկայացվող հատուկ էկոնախագծման պահանջները սահմանված են I հավելվածի 2-րդ կետով:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգն այդ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ այդ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:
2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերի փաթեթը պետք է պարունակի սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված հաշվարկման օրինակը:

Եթե մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք այլ սարքերից արտամիջարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի մանրամասները,

ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունն ստուգելու համար արտադրողների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Այդպիսի դեպքերում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն նաև կենցաղային լվացքի մեքենային համարժեք բոլոր մյուս այն մոդելների ցանկը, որոնց տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ձեռք են բերվել նույն հիմքով:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար անդամ պետությունները 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգումներն անցկացնելիս կիրառում են սույն կանոնակարգի III հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա լավագույն աշխատանքային բնութագրերով կենցաղային լվացքի մեքենաների մասով կողմնորոշիչ հենանիշերը սահմանված են IV հավելվածով:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը սույն կանոնակարգը վերանայում է տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից՝ այն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան չորս տարի անց, եւ այդ վերանայման արդյունքը ներկայացնում է Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորում: Վերանայման արդյունքում գնահատվում են մասնավորապես III հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները, ինչպես նաեւ ողողման, քամելու եղանակով չորացման արդյունավետության մասով պահանջներ սահմանելու հնարավորությունը եւ տաք ջրի ներթողման ներուժը:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:
2. Այն կիրառվում է 2011 թվականի դեկտեմբերի 1-ից:
Այնուամենայնիվ, ստորեւ նշված Էկոնախագծման պահանջները կիրառվում են հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝
 - ա) I հավելվածի 1(1) կետով սահմանված Էկոնախագծման ընդհանուր պահանջները կիրառվում են 2012 թվականի դեկտեմբերի 1-ից.
 - բ) I հավելվածի 1(2) կետով սահմանված Էկոնախագծման ընդհանուր պահանջները կիրառվում են 2011 թվականի հունիսի 1-ից.
 - գ) I հավելվածի 1(3) կետով սահմանված Էկոնախագծման ընդհանուր պահանջները կիրառվում են 2013 թվականի դեկտեմբերի 1-ից.

- դ) I հավելվածի 2(2) կետով սահմանված էկոնախագծման հատուկ պահանջները կիրառվում են 2013 թվականի դեկտեմբերի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի նոյեմբերի 10-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***Էկոնախագծման պահանջները****1. ԷԿՈՆԱԽԱԳԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1) Կենցաղային լվացքի մեքենաների էներգասպառման եւ այլ պարամետրերի հաշվարկման համար պետք է կիրառվեն այն ցիկլերը (այսուհետ՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր), որոնցում միջին կեղտոտվածության բամբակյա սպիտակեղենը լվացվում է 40 °C եւ 60 °C ջերմաստիճանների պայմաններում: Այդ ցիկլերը պետք է հստակորեն նշվեն կենցաղային լվացքի մեքենաների ծրագրի ընտրության սարքի վրա կամ առկայության դեպքում՝ կենցաղային լվացքի մեքենաների էկրանին, եթե այդպիսին կա, կամ երկուսի վրա էլ, եւ պետք է նշվեն որպես «60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր» եւ «40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր»:

2) Արտադրողների կողմից տրամադրվող ուղեցույցում պետք է ներառեն՝

ա) 60 °C-ում եւ 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրերի մասին տեղեկություններ, որոնք կոչվում են «60 °C -ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր» եւ «40 °C -ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր», ինչպես նաեւ նշում պետք է կատարվի այն մասին, որ դրանք հարմար են միջին կեղտոտվածության բամբակյա սպիտակեղենը լվանալու համար, եւ որ դրանք համարվում են նմանատիպ բամբակյա սպիտակեղեն լվանալու համար էներգիայի եւ ջրի համակցված սպառման առումով ամենաարդյունավետ ծրագրերը: Բացի այդ,

պետք է նշվի, որ ջրի փաստացի ջերմաստիճանը կարող է տարբերվել ցիկլի համար նախատեսված ջերմաստիճանից.

- բ) անջատված եւ միացված ռեժիմների էներգասպառման վերաբերյալ տեղեկություններ.
- գ) լվացքի հիմնական ծրագրերի՝ թե՛ լրիվ, թե՛ մասնակի բեռնվածքի կամ երկուսի դեպքում էլ ծրագրի ժամանակի, լվացքի մնացորդային խոնավության պարունակության, ինչպես նաեւ էներգիայի եւ ջրի սպառման վերաբերյալ կողմնորոշիչ տեղեկություններ.
- դ) լվացքի տարբեր ջերմաստիճանների համար նպատակահարմար լվացող միջոցների վերաբերյալ առաջարկություն:

- 3) Կենցաղային լվացքի մեքենաների դեպքում վերջնական սպառողին պետք է առաջարկվի 20 °C ջերմաստիճանում լվացքի ցիկլ: Տվյալ ծրագրի մասին հստակ տարբերակելի ձեռով պետք է նշվի կենցաղային լվացքի մեքենայի ծրագրի ընտրության կարգավորիչի կամ լվացքի մեքենայի էկրանին, եթե այդպիսին կա, կամ երկուսի վրա էլ:

2. ԷԿՈՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կենցաղային լվացքի մեքենաները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

- 1) 2011 թվականի դեկտեմբերի 1-ից՝
 - կենցաղային բոլոր լվացքի մեքենաների համար էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) պետք է 68-ից ցածր լինի.
 - 3 կգ-ից ավելի նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաների դեպքում լվացման արդյունավետության ինդեքսը (I_w) պետք է 1,03 -ից բարձր լինի.
 - 3 կգ-ին հավասար կան դրանից պակաս նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաների դեպքում լվացքի արդյունավետության ինդեքսը (I_w) պետք է 1.00-ից բարձր լինի.

- կենցաղային բոլոր տեսակի լվացքի մեքենաների դեպքում ջրի սպառումը (W_i) պետք է լինի՝

$$W_t \leq 5 * c + 35$$

որտեղ 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ 40 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում c -ն կենցաղային լվացքի մեքենայի նոմինալ տարողունակությունն է՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի ցածր:

2) 2013 թվականի դեկտեմբերի 1-ից՝

- 4 կգ-ին հավասար կամ դրանից բարձր նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաների դեպքում էներգաարդյունավետության ինդեքսը (EEl) պետք է 59-ից ցածր լինի.
- բոլոր տեսակի կենցաղային լվացքի մեքենաների դեպքում ջրի սպառումը պետք է լինի՝

$$W_t \leq 5 * c_{1/2} + 35$$

որտեղ 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում $c_{1/2}$ -ը կենցաղային լվացքի մեքենայի նոմինալ տարողունակությունն է՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի ցածր:

Էներգաարդյունավետության ինդեքսը (EEl), լվացման արդյունավետության ինդեքսը (I_w) եւ ջրի սպառումը (W_i) հաշվարկվում են II հավելվածի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Էներգաարդյունավետության ինդեքսի, լվացման արդյունավետության ինդեքսի, ջրի սպառման եւ մնացորդային խոնավության պարունակության հաշվարկման մեթոդը

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային լվացքի մեքենայի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկելու համար 60 °C-ում լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի եւ 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի հաշվարկված տարեկան էներգասպառումը համեմատվում է դրա ստանդարտ տարեկան էներգասպառման հետ:

- ա) Էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ մեկ տասնորդական նիշ՝

$$EEI = \frac{AE_c}{SAE_c} * 100$$

որտեղ՝

AE_c -ն կենցաղային լվացքի մեքենայի հաշվարկված տարեկան էներգասպառումն է.

SAE_c -ն կենցաղային լվացքի մեքենայի ստանդարտ տարեկան էներգասպառումն է:

- բ) Ստանդարտ տարեկան էներգասպառումը (SAE_c) հաշվարկվում է կՎտժ/տարի-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$SAE_c = 47,0 * c + 51,7$$

որտեղ՝

c -ն $60\text{ }^{\circ}\text{C}$ -ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ $40\text{ }^{\circ}\text{C}$ -ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի նոմինալ տարողունակությունն է՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի ցածր:

գ) հաշվարկված տարեկան էներգասպառումը (AE_c) հաշվարկվում է կՎտժ/տարի-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

i)

$$AE_c = E_t * 220 + \frac{\left[P_o * \frac{525600 - (T_t * 220)}{2} + P_l * \frac{525600 - (T_t * 220)}{2} \right]}{60 * 100}$$

որտեղ՝

E_t -ն հաշվարկված էներգասպառումն է.

P_o -ն «անջատված ռեժիմի» հաշվարկված հզորությունն է

P_l -ն «միացված ռեժիմի» հաշվարկված հզորությունն է.

T_t -ն ծրագրի ժամանակն է.

220-ը տարեկան լվացման ստանդարտ ցիկլերի ընդհանուր թիվն է:

ii) Եթե կենցաղային լվացքի մեքենան սարքավորված է էլեկտրաէներգիայի կառավարման համակարգով, որով ծրագրի ավարտից հետո կենցաղային լվացքի մեքենան ավտոմատ կերպով անցնում է «անջատված ռեժիմի», ապա հաշվարկված տարեկան էներգասպառումը (AE_c) հաշվարկվում է՝ հաշվի առնելով «միացված ռեժիմի» արդյունավետ տեւողությունը՝ ըստ հետևյալ բանաձեւի.

$$AE_c = E_t * 220 + \frac{\{(P_l * T_l * 220) + P_o * [525600 - (T_t * 220) - (T_l * 220)]\}}{60 * 1000}$$

որտեղ՝

T_t -ը «միացված ռեժիմի» տեսողությունն է:

- դ) Հաշվարկված էներգասպառումը (E_t) հաշվարկվում է կՎտժ-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երեք տասնորդական նիշ.

$$E_t = [3 * E_{t,60} + 2 * E_{t,60\ 1/2} + 2 * E_{t,40\ 1/2}]/7$$

որտեղ՝

$E_{t,60}$ -ը 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է.

$E_{t,60\ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է.

$E_{t,40\ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է:

- ե) «Անջատված ռեժիմի» հաշվարկված հզորությունը (P_o) հաշվարկվում է Վտ-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երեք տասնորդական նիշ.

$$P_o = (3 * P_{o,60} + 2 * P_{o,60\ 1/2} + 2 * P_{o,40\ 1/2})/7$$

որտեղ՝

$P_{o,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է.

$P_{o,60\ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է.

$P_{0,40 \ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է:

- զ) «Միացման ռեժիմի» հաշվարկված հզորությունը (P_l) հաշվարկվում է Վտ-ով՝ հետեյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

$$P_l = (3 * P_{l,60} + 2 * P_{l,60 \ 1/2} + 2 * P_{l,40 \ 40 \ 1/2})/7$$

որտեղ՝

$P_{l,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$P_{l,60 \ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$P_{l,40 \ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է:

- է) Ծրագրի հաշվարկված ժամանակը (T_t) հաշվարկվում է թուփերով՝ հետեյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ թուփի ամենամոտ ամբողջ արժեքը.

$$T_t = (3 * T_{t,60} + 2 * T_{t,60 \ 1/2} + 2 * T_{t,40 \ 1/2})/7$$

որտեղ՝

$T_{t,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{t,60 \ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{t,40 \ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է:

- ը) «Միացված ռեժիմի» հաշվարկված ժամանակը (T_l) հաշվարկվում է ըստ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ ընդհանուր ամբողջ արժեքը.

$$T_l = (3 * T_{l,60} + 2 * T_{l,60 \ 1/2} + 2 * T_{l,40 \ 1/2})/7$$

որտեղ՝

$T_{l,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում «միացված ռեժիմում» բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{l,60 \ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում «միացված ռեժիմում» բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{l,40 \ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում «միացված ռեժիմում» բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է:

2. ԼՎԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Լվացման արդյունավետության ինդեքսը (I_w) հաշվարկելու համար 60 °C-ում լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի եւ 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի լվացման արդյունավետությունը համեմատվում է էտալոնային լվացքի մեքենայի լվացման արդյունավետության հետ՝ պայմանով, որ էտալոնային լվացքի մեքենան ունի համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդներում, այդ թվում՝ այն փաստաթղթերով սահմանված մեթոդներում

նշված բնութագրերը, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:

- ա) Լվացման արդյունավետության ինդեքսը (I_w) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է միջեւ երեք տասնորդական նիշ.

$$I_w = \frac{(3 * I_{w,60} + 2 * I_{w,60\ 1/2} + 2 * I_{w,40\ 1/2})}{7}$$

որտեղ՝

$I_{w,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի լվացման արդյունավետության ինդեքսն է.

$I_{w,60\ 1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի լվացման արդյունավետության ինդեքսն է.

$I_{w,40\ 1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի լվացման արդյունավետության ինդեքսն է:

- բ) Բամբակյա գործվածքի համար նախատեսված մեկ ստանդարտ ծրագրի (p) լվացման արդյունավետության ինդեքսը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$I_{w,p} = \frac{1}{n} * \sum_{i=1}^n \left(\frac{W_{T,i}}{W_{R,a}} \right)$$

որտեղ՝

$W_{T,i}$ -ն փորձարկվող կենցաղային լվացքի մեքենայի լվացման արդյունավետությունն է՝ փորձարկման մեկ ցիկլի (i) համար.

$W_{R,a}$ -ն էտալոնային լվացքի մեքենայի լվացման միջին արդյունավետությունն է.

n -ը փորձարկման ցիկլերի թիվն է, 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար

$n \geq 3$, 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար $n \geq 2$, 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար $n \geq 2$:

գ) Լվացման արդյունավետությունը (W) փորձարկման ցիկլի ավարտից հետո փորձարկման յուրաքանչյուր նմուշի արտացոլման միջին արժեքն է:

3. ՋՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Ջրի սպառումը (W_t) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ մեկ տասնորդական նիշ.

$$W_t = W_{t,60}$$

որտեղ՝

$W_{t,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում ջրի սպառումն է:

4. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Ծրագրի մնացորդային խոնավության պարունակությունը (D) հաշվարկվում է տոկոսներով եւ կլորացվում է մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող
ստուգման ընթացակարգը**

I հավելվածով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները փորձարկում են մեկ միավոր կենցաղային լվացքի մեքենա: Եթե չափված պարամետրերը չեն համապատասխանում 4(2) հոդվածի իմաստով արտադրողի կողմից ներկայացված տեխնիկական փաստաթղթերի արժեքներին՝ 1-ին աղյուսակով սահմանված միջակայքերում, ապա չափումներ են իրականացվում եւս երեք միավոր կենցաղային լվացքի մեքենաների համար: Այդ երեք միավոր կենցաղային լվացքի մեքենաների համար չափված արժեքների թվաբանական միջինը պետք է համապատասխանի 1-ին աղյուսակով սահմանված միջակայքերի պահանջներին՝ բացառությամբ էներգասպառման, որի չափված արժեքը չպետք է E_t -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6%-ով:

Այլապես տվյալ մոդելը եւ մյուս բոլոր համարժեք կենցաղային լվացքի մեքենաների մոդելները չեն համարվում I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգեր, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, այդ թվում՝ այն փաստաթղթերում ներկայացված մեթոդները, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:

Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Տարեկան էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է AE_c -ի նոմինալ արժեքից ($^{\circ}$) մեծ լինի ավելի քան 10 %-ով:
Լվացման արդյունավետության ինդեքսը	Չափված արժեքը չպետք է I_w -ի նոմինալ արժեքից փոքր լինի ավելի քան 4 %-ով:
Էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է E_r -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 10 %-ով:
Ծրագրի ժամանակը	Չափված արժեքը չպետք է T_r -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 10 %-ով:
Ջրի սպառումը	Չափված արժեքը չպետք է W_r -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 10 %-ով:
Էներգասպառումն անջատված եւ միացված ռեժիմներում	1,00 Վտ-ից բարձր P_o եւ P_i էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 10 %-ով: 1,00 Վտ-ից պակաս կամ հավասար P_o եւ P_i էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 0,10 Վտ-ով:
Միացված ռեժիմի տեսողությունը	Չափված արժեքը չպետք է T_{I-r} նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 10 %-ով:

* «Նոմինալ արժեք» նշանակում է արտադրողի կողմից նշված արժեք:

ՀԱՎԵԼՎԱԾ IV**Հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ որպես 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակ լվանալու/քամելու ընթացքում ջրի եւ էներգիայի սպառման, լվացման արդյունավետության եւ օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակի առումով կենցաղային լվացքի մեքենաների համար շուկայում առկա լավագույն տեխնոլոգիաները սահմանվում են հետեւյալ կերպ*:

- 1) 3 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.
 - ա) էներգասպառումը՝ 0,57 կՎտժ/ցիկլ (կամ 0,19 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 117,84 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 105,34 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.
 - բ) ջրի սպառումը՝ 39 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար սպառվող 8 580 լիտր/տարի ցուցանիշին.
 - գ) 1,03 լվացման արդյունավետության ինդեքսը $\geq I_w > 1,00$.
 - դ) լվացման/քամելու (900 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակի վերաբերյալ տվյալներ չեն նշվում.
- 2) 3,5 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.
 - ա) էներգասպառումը՝ 0,66 կՎտժ/ցիկլ (կամ 0,19 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 134,50 կՎտժ/տարի տարեկան

* 1 Վտ «անջատված ռեժիմի» հզորության եւ 2 Վտ «միացված ռեժիմի» հզորության պարագայում 90 րոպե տեւողությամբ ծրագրի համար տարեկան էներգասպառումը գնահատելիս կիրառվել է II հավելվածով սահմանված հաշվարկման մեթոդը:

ընդհանուր էներգասպառմանը, որից 122,00 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.

բ) ջրի սպառումը՝ 39 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար սպառվող 8 580 լիտր/տարի ցուցանիշին.

գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .

դ) լվացման/քամելու (1 100 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակի վերաբերյալ տվյալներ չեն նշվում.

3) 4,5 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.

ա) էներգասպառումը՝ 0,76 կՎտժ/ցիկլ (կամ 0,17 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 152,95 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 140,45 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.

բ) ջրի սպառումը՝ 40 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար սպառվող 8 800 լիտր/տարի ցուցանիշին.

գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .

դ) լվացման/քամելու (1 000 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 55/70 դԲԱ.

4) 5 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.

ա) էներգասպառումը՝ 0,850 կՎտժ/ցիկլ (կամ 0,17 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 169,60 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 157,08 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.

- բ) ջրի սպառումը՝ 39 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար սպառվող 8 580 լիտր/տարի ցուցանիշին.
- գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .
- դ) լվացման/քամելու (1 200 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկ՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 53/73 դԲԱ.
- 5) 6 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.
- ա) էներգասպառումը՝ 0,90 կՎտժ/ցիկլ (կամ 0,15 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 178,82 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 166,32 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.
- բ) ջրի սպառումը՝ 37 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար սպառվող 8 140 լիտր/տարի ցուցանիշին.
- գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .
- դ) լվացման/քամելու (1 600 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակի վերաբերյալ տվյալներ չեն նշվում.
- 6) 7 կգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.
- ա) էներգասպառումը՝ 1,05 կՎտժ/ցիկլ (կամ 0,15 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 201,00 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 188,50 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.
- բ) ջրի սպառումը՝ 43 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար տարեկան սպառվող 9.460 լիտր ցուցանիշին.

- գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .
- դ) լվացման/քամելու (1 000 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 57/73 դԲԱ.
- ե) լվացման/քամելու (1 400 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 59/76 դԲԱ.
- զ) լվացման/քամելու (1 200 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 48/62 դԲԱ (ներկառուցված կենցաղային լվացքի մեքենաների դեպքում).
- 7) Ցկգ նոմինալ տարողունակությամբ կենցաղային լվացքի մեքենաներ.
- ա) էներգասպառումը՝ 1,200 կՎտժ/ցիկլ (կամ 0,15 կՎտժ/կգ), որը համապատասխանում է 234,26 կՎտժ/տարի տարեկան ընդհանուր էներգասպառմանը, որից 221,76 կՎտժ/տարի-ն սպառվում է 220 ցիկլերի համար, իսկ 12,5 կՎտժ/տարի-ն՝ ցածր էներգասպառման ռեժիմների ժամանակ.
- բ) ջրի սպառումը՝ 56 լիտր/ցիկլ, որը համապատասխանում է 220 ցիկլերի համար տարեկան սպառվող 12 320 լիտր ցուցանիշին.
- գ) լվացման արդյունավետության ինդեքսը՝ 1,03-ի I_w .
- դ) լվացման/քամելու (1 400 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 54/71 դԲԱ.
- ե) լվացման/քամելու (1 600 պտ/րոպե) ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկը՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված 54/74 դԲԱ:
-